

Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն.

Զանգեզուր գաւառամասի տիպական բնակարանները արհեստական քարայրներն են, որոնք տեղական բարբառով քրատակ (քարիտակ) են կոչում։ Հին ժամանակներում այս գաւառամասի գրեթէ բոլոր բնակարանները այդպիսի այրեր են եղել, իսկ այժմ բացի նրանցից շինուած են և շրաբներ և կանոնաւոր տներ։ Հետզհետէ ժողովուրդը դուրս է գալիս այդ հին և նոր քարատակներից, շինուած է կանոնաւոր, երկյարկանի տներ, իսկ քարատակները գործ է ածում կամ որպէս գոմ և կամ որպէս խոտանոց։

Քարատակները փորուած են և փորուած են ձորերի լանջերին, քիրծերի մէջ։ Ընդհանրապէս դռան վերեր մի ծակ է թողնուած, իբր լուսամուտ, թէւ կան և այնպիսինները, որոնք բոլորովին պատուհան չունին։ Նրանք բաղկացած են միայն մի մեծ սենեակից, թէւ կան և երկու սենեակ ունեցողներ։ Դուան մօտ, անկիւնուած շինուած է մի օջախ, որի վերեւում, մի փոքրիկ անշք է բաց արած՝ իբր ծխնելոյզ։ Մի քանիսի մէջ էլ, մանաւանդ հների, թոնիր կայ թաղուած։ Պատերի մէջ բնականից պահարաններ, գարակներ և նստարաններ են փորուած։ Բոլոր պատերը սեացած են ծխից, որովհետև օջախը կամ թոնիրը վառելիս՝ սարսափելի ծուխ է տիրում։ Բոլոր քարատակներն խոնաւ են, մի քանիսն էլ գարնան յորդ անձրեւների ժամանակ կաթուած են, այնպէս որ բնակիչները գրեթէ առանց բացառութեան ուղացաւ ունին։

Այսպիսի բնակարաններուած կահ-կարասիք չկան։ Մի երկու կապերտ և գուցէ մի գորգ—ահա նրանց ամբողջ կահաւորութիւնը, Քնուած են գետնի վրայ, անկողինները թաղիքների վրայ ձգելով։ Հիւրեկած միջոցին միայն փռուած են գորգը, վերան մի ներքնակ ձգուած և մի բարձ դնուած, որ հիւրը նստի և բարձին կոթնի։

Մի պղնձէ գիւգուած կամ կուժ, մի քանի կաթսայ, մի սինի, մի քանի պղնձէ ափսէ, մի թաս, մի մեծ դանակ, մի քանի փայտէ զդալ, մի կասկարա,—ահա խոհանոցի բոլոր պիտոյքը։

Նոր շինուող կանոնաւոր տները ընդհանրապէս երկյարկանի են, խրաքանչիւր յարկը առաւելապէս մի նրբանցքից և մի մեծ սենեակից և կամ միայն երկու սենեակից բաղկացած, առանց նրբանցքի։ Ներքին յարկի յատակը սովորաբար չեն տախտակուած, այ միայն վերի յարկինը։ Չատ հազիւ է պատահուած, որ առաստաղը տախտակեն։ Պատուհանները մեծ են լինուած և ապակի ձգուած։ Պատշգամբի ձողերը սովորաբար

բաւական գեղեցիկ են լինում, բայց ներկուած չեն, ինչպէս և ոչ պատուհանները, ոչ դռները և ոչ յատակը:

Եցսպիսի բնակարաններում նկատւում են մի քանի եւրոպական աթոռներ, սեղան, երբեմն պատի ժամացոյց, բայց ընդհանրապէս յատակին թաղիքներ են լինում փոռուած, պատին կից ներքնարկներ ձգած, կապերտով ծածկած, և կողքին բարձեր դրած:

Տեղացիք սիրում են ծալապատիկ նստել, և աթոռներ շատ քիչ են գործ ածում:

Սենեակները տաքայնում են թիթեղեաց վառարանով. թէև իւրաքանչիւր սենեակի մէջ շինում են նաև «բուխարի»:

Իբր խոհանոց գործ են ածում կամ ներքին յարկի սենեակներից մինը կամ հին տունը, իսկ ամառը պատշգամբի ծալրերից մինում, սենեակի պատի շարունակութեան մէջ շինուած „օջախը“, որ մի կիսաբոլոր բացուածք է և ունի ծխնելոյզ:

Նոր Գորիսի գրեթէ բոլոր տները մի յատակագծով են շինուած. —Միւնոյն ուղղութեամբ ձգւում են մի երկար դահլիճ, ծալրերին մի մի փոքրիկ սենեակ, որոնցից մինի հանդէպ գտնւում է խոհանոցը, միւսի՝ նոյն մեծութեան մի սենեակ, իսկ վերջինիս և խոհանոցի մէջ տարածւում է միւնոյն լայնութեան պատշգամբ։ Երկյարկանի տներում մի փոքրիկ պատշգամբ էլ դահլիճից փողոցի վրայ է նայում։ Տան առաջ տարածւում է մի փոքրիկ պարտէզ, խնձորի, կեռասի և այլ ծառերով։ Ճատերի պարտէզներում կան ջրհորներ։

Մուտքը միշտ դարբասից է, որ շատ մեծ է և բայցւում է փողոցի վրայ, պարտէզի և տան մէջ թողնուած բայց տարածութեան առջև։

Տների կտուրները տախտակներով եռանկիւնաձև ծածկուած են։ Պատուհանները մեծ են, մի քանիսը երկաթէ վանդակապատով. միւսները առանց նրան։ Թոները երկիֆեղկանի են։ Ըռանց բացառութեան, բոլորի յատակներն էլ տախտակած են։ իսկ առաստաղները տախտակած են լինում միայն հարուստներինը, միջակ կարողութիւն ունեցողները՝ առաստաղին սպիտակ կտոր են մեխում, որը 2—3 տարին մի անգամ պոկում և լուանում են։ Թոներն ու պատուհանները ընդհանրապէս սպիտակ գոյնով ներկուած են։ Սենեակները տաքացնում են առաւելապէս թիթեղեաց վառարաններով, իսկ մի քանի տներում՝ նաև հոլլանդական վառարաններով, թէպէտ «բուխարիներ» այստեղ էլ կան։

Կահաւորութիւնը եւրոպականի և ասիականի խառնուրդ է ներկայացնում։